


5448

66

Կանաչաբույսեր

Շրջանային բույսեր

1853



Կ. Դր. Կ.

2010

4-21

46

ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ
ԸՆԹԵՐՅԱՍԻՐԸ
ԹԱՆԳԱՐԱՆԻՆ



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
Ի ՏՊԱՐԱՆԻ Յ. ՄԻԻԿԵՆՑԻՍԵԱՆ
ՈՅՐ

1853

06
4-91

23969 - in-72
23969 - copy



42675
39

06

Printed in Turkey

9-21 13

ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ԲՆԹԵՐՑԱՌԻՆՑ ԹՎԵԳԱՐԱՆԻՆ

Որոյ ո՛ւր հոյ աստճորդութիւն . թա
Յափն իբրեւ պեղեւ . երեւութիւն
սո ՚ի խորհարդս քաղածս . (Առակ
ժա . 14 .)

Յապաղեն վտարհարդս որս ո՛ւր պատ
ուեն ընխորհրդախոյս . ՚ի սերբս խորհրդ
քականայ հասարակ խորհարդ . (Աղջ .
ժե . 22 .)

ՀԱՏՈՒԱԾ Ա.

Ընկերութեան տեղուց , տեղը չու գաշտպանեցք .

1. 1853 Յունուար մէկ թուականով ընթերցա
սէր անձինքներէ բաղկացեալ ընկերութիւն մը
պիտի կազմուի : Այս ընկերութեան տեղը կ.
Պօլսոյ մէջ պիտի ըլլայ , և պիտի կոչուի թան
գարան ՚նթերցասիրաց :

2. Որ ժամանակ որ հարիւր բաժանորդ ըս
տորագրուին , ընկերութիւնը այն օրէն հաստատ
ուած պիտի համարուի :

3. Այս ընկերութիւնը իրեն երկու յատուկ
պաշտպան և երեք ալ պաշտպանի փոխանորդ
պիտի ունենայ , զորոնք ընկերութիւնը ինք պի
տի ընտրէ իւրաքանչիւրոց հաճութեամբը , և
ասոնք ընկերութենէն դուրս անձինք ալ կրնան
ըլլալ :

ՀԱՏՈՒԱԾ Բ .

Ընկերութեան նպատակք .

4. Այս ընկերութեան նպատակը , ազգին հասարակութեանը մէջ ընթերցման ախորժակ մը տարածելով , անոր մտաւոր մշակութիւնը զարգացնել է :

ՀԱՏՈՒԱԾ Գ .

Ընկերութեան միջոցներք .

5. Ընկերութիւնը իր նպատակին հասնելու համար իրեն միջոց ընտրած է , Ա . իր նպատակին կատարմանը գործակից ըլլալ ուզող անձինքը անգամակից առնել :

Բ . իր գործածութեանը համար պէտք եղած գիրք , գործիք , ուրուագրութիւնք (ըէսիմ) և հնութիւնք հաւաքել :

Գ . Ընկերութիւնը իր գործածութեանը և նաև դրամով ուրիշի վարձելու համար մատենադարան մը կազմել հանդերձ ընթերցման սենեակներով :

Դ . Ընդամահցայը մէջ լեզուագիտութեանց և ամենահարկաւոր արհեստից ուսումը մտցընել ու եղածը դիւրացընել :

Ե . Ազգին մէջ հարկաւոր , օգտակար , և ըզբօսական գիրքեր ու գրուածքներ տարածել աւժան գինով :

ՀԱՏՈՒԱԾ Դ .

Մատենադարան և ընթերցարան .

6. Ընկերութեան մատենադարանը պիտի կազմուի գլխաւորապէս բանասիրական , պատ-

ՀԱՏՈՒԱԾ Զ.

Թանգարանին գրամագչուից եւ անոր սեջանաւորաց .

15. Թանգարանը տասը հազար զուռուշ ըսկըզնական գրամագչուի մը պիտի ունենայ 500 բաժինի բաժնուած, ամեն մէկ բաժինը 20 զուռուշ:

16. Տնկեր ըլլալու անձը պարտական է այս բաժիններէն գոնէ մէկ հատին ստորագրուելու. որուն փոխարէն հետեւեալ անգորրագիրը պիտի ընդունի:

ԹԻԻ

ԱՆՈՐՐԲԱԳԻՐ ԹԱՅԻԱՐԱՆԻ ԸՆԹԵՐՑԱՍԻՐԱՑ

Վ ճարեաց արգոյ ԸՆ
սորս մոյ (կամ երկու) բաժանորդական արձանի շտաբուշ
խան (կամ խառատուն) սխեալ ՚ի ամսոյ 1853 :
(Բրաւիան)

Վրաստանի արձանագրութիւն
Դ Ա Ն Ձ Ա Գ Ե Տ

.

17. Տաճանորդութեան ստորագրութիւնը ամեն ամսուն սկիզբէն կ'ըլլայ կամ անանկ պիտի համարուի:

18. Տնկերութեան ամեն մէկ բաժանորդները ամսէ ամիս վեց վեց զուռուշ ալ տուրք պիտի վճարեն: Այս տուրքը տարեկան ալ կրնայ վճարուիլ, վեցամսեայ ալ, ամսէ ամիս ալ:

19. Մասկան տուրքերը յաջորդ ամսոյն հաւմար ամեն ընթացիկ ամսոյն վերջի օրերը պիտի վճարուին. ընկերները այն տուրքը կամ իրենք ժողովարանը պիտի բերեն կամ խրկեն:

20. Մասէ ամիս վճարող ընկերներէն որոնք օր իրենց տուրքը կանոնաւոր կերպով չի վճարեն,

Թանգարանին կողմանէն պէտք եղած ազգարարութեամբ թիւերը անոնց պիտի ըլլայ, և թէ որ դարձեալ նոյն անկանոնութեան մէջ շարունակելու ըլլան, Թանգարանին ժողովը պիտի պարտաւորի անանկները իր անդամակցութեան մերժելու, ըստ որում Թանգարանին յաջողութեան գլխաւոր տարերքը համարուած այս ստակի մասին անհոգութիւն ընողէն՝ ընկերութիւնը իրաւամբ չի կրնար օգուտ մը սպասել:

21. Վերջիչեալ 500 բաժինի ստորագրութիւնը լրջնապէս ետև ընկերութիւնը կրնայ իր դրամագլուխը աւելցընել, կամ բաժիններուն թիւը աւելցընելով և կամ առջի 500ին գինը աւելցընելով:

22. Ընկերութիւնը սեղանաւոր մը պիտի սենեհայ, որուն քով շահու պիտի ձգէ իր դրամը, և ամէն ամիս անկէ պիտի առնէ հարկաւոր եղածին չափ:

Հ Ա Տ Ո Ւ Ա Ճ Է .

Թանգարանի կառայարութեան կերպը եւ յոյսերնայ
ընտրութիւնը .

23. Ըստ ընկերութիւնը 30 անձէ բաղկացեալ անօրինական ժողովէ մը պիտի կառավարուի: Ըստ ժողովականները ընկերութեան անդամակցացը մէջէն պիտի ընտրուին:

24. Տնօրինական ժողովին պաշտօնը մէկ տարի պիտի աւէ, բայց ժողովականք կրնան կրկին կրկին ընտրուիլ:

25. Տնօրինական ժողովը խորհրդականներէ և պաշտօնատարներէ բաղկացեալ պիտի ըլլայ որ ասոնք են:

1. Նախագահ . 1. Փոխանորդ Նախագահի,

1. Լտենադպիր . 2. Օգնական Լտենադպիր .
1. Գանձապետ . 2. Փոխանորդ Գանձապետի .
1. Գրապետ . 1. Օգնական Գրապետի .
1. Ստտակարար . 1. Օգնական Ստտակարարի .

26. Լմեն նոր ժողով կազմուելուն ու թնական հոգի առջի ժողովականներէն իր մէջը պիտի առնէ :

27. Լռաջին անգամի ժողովականներէն զատ, մէկը չի կրնար ժողովական, մանաւանդ պաշտօնատար անուանիլ, թէ որ գտնէ լման վեց ամիս ընկերութիւն ըրած չըլլայ . իսկ ժողովին նախագահ կամ նախագահի փոխանորդ ըլլալու համար կամ լման տարի մը ընկերութիւն ըրած պիտի ըլլայ, կամ բոլոր ընկերներուն $\frac{3}{4}$ ին հաւնած մէկը ըլլալու է :

28. Տնօրինական ժողովին Նախագահը ընկերութիւնն ինք պիտի ընտրէ . Նախագահը իր փոխանորդը ինք պիտի ընտրէ . մնացած պաշտօնատարները Նախագահը իր փոխանորդին հետ պիտի ընտրէ : Իսկ մնացած 18 ժողովականները պաշտօնատարաց ամենը մէկ տեղ գալով պիտի ընտրուին :

29. Տնօրինական ժողովին ընտրութիւնը դեկտեմբեր 20 էն պիտի սկսի ու մինչև 31 ը պիտի վերջանայ, նոր ժողովականները իրենց պաշտօնը յունուարի մէկէն պիտի սկսին :

30. Նոր ժողովին ընտրութեանը ամիս մը մը նացած՝ հին ժողովը յաջորդին մէջ ընտրուելու արժան գատուած անձանց գտնէ հարիւր հոգւոյն անուանը մէկ ցանկը պիտի շինէ, ու ժողովականին մէջ պատէ մը վար պիտի կսիտէ, ամեն անուան նաև առջին նշանակելով ինչ պաշտօնի

արժանի դատուած ըլլալը :

31. Նախագահի ընտրութեան համար ընկերուէն անդամակիցները հարկ չէ որ ժողովարանը երթան անձամբ ընտրութիւն ընելու, այլ կրնան նաև տոմսակ մը խրկել ժողովարանը իրենց ստորագրութեամբը և կնքով, ու անոր մէջ նշանակել Նախագահ ընտրել ուղած անձերնուն անունը, մականունը, արհեստը, որոշ կերպով: Այս որոշումը գրով միայն պիտի ըլլայ, բանիւ կամ ուրիշ բերնով լուր խրկելով բնաւ չի կրնար ըլլալ:

32. Եւ որովհետև նոր ժողովի անգամ ընտրուելիք անձինք պիտի կրնան ամիս մը յառաջ ճանչցուիլ (յօդ 30), ուստի նախագահի ընտրութեան համար խրկուած նամակներն ալ կրնան դեկտեմբեր 20 էն՝ 20 կամ 25 օր առաջ խրկուիլ, և սովորական նամակներէն որոշուելու համար « վասն ընտրութեան նախագահին » խօսքը գրելու և ժողովին Նախագահին ուղղելու է, որ առանց բացուելու պահէ մինչև ընտրութեան օրը:

33. Թէ որ ընկերութեան որոշած Նախագահները երեք չորս ըլլան, և այս երեք չորսն ալ գրեթէ հաւասար և բաւական քուէ գտած ըլլան, այն ժամանակը անոնց մէջէն մէկ հատին ընտրութիւնը ժողովին որոշմանը կը ձգուի:

34. Պաշտօնատար մը կամ պաշտօնատարի օգնական մը թէ որ իր ժամանակը չի լրացուցած ժողովէն հեռանալու ստիպուի, ժողովը իր անդամներուն մէջէն անոր տեղ մէկ ուրիշ պիտի ընտրէ:

35. Տնօրինական ժողովին ամեն անգամ նորոգուած ժամանակը, նոր ժողովականները պար

տաւորեալ են , առջի ժողովին և անոր ամեն մէկ պաշտօնատարներուն վարմունքը թանգարանին կանոնացը համեմատ ըլլալը վաւերացընել յատուկ վկայագիրով մը : Ասանկ վկայագիր մ'ալ պիտի տայ նաև տնօրինական ժողովը այն պաշտօնատարներուն , որ իրենց պաշտօնին ժամանակը չի լրացած գործով մը կամ առիթով մը կ'ըստիպուին հրաժարուելու :

Հ Ա Տ ՈՒ Ա Ճ . Ը .

Տնօրինական ժողովին գումարումները .

36. Տնօրինական ժողովը առջի բերանը ամիսը երկու անգամ պիտի գումարի կիրակի օրերը՝ տարւոյն եղանակացը համեմատ որոշեալ ժամերու մէջ , բայց վերջերը երբոր ժողովին գործերը ներեն՝ կրնայ ամիսը մէկ անգամ ալ գումարիլ :

37. Ժողովը տարին երկու վեցամսեայ յատուկ ժողով ալ պիտի ընէ յունիս և դեկտեմբեր ամսոց վերջի կիրակիներուն մէջ , և հոն պիտի ծանուցանէ ընկերութեան ,

Ա . Այն վեցամսոց մէջ կատարուած գործողութիւնները :

Բ . Թանգարանին եկամուտին վիճակը :

Գ . Այն վեցամսոց մէջ ընկեր գրուողներուն թիւն ու անունները :

Դ . Այն վեցամսոց մէջ դադարած անդամոց թիւն ու անունները :

Ե . Ինկերութեան ծանուցանել ուղուած բաները :

38. Ժողովը կրնայ նաև արտաքոյ կարգի ալ

գումարիլ Նախագահին հրաւիրելովը :

39. Սինչև որ Նախագահը կամ անոր փոխանորդը չըլլայ ժողով չըլլար :

40. Սինչև որ ժողովականաց իսկական թուոյն $\frac{2}{3}$ մասը չի գումարի ժողով չըլլար :

41. Սինչև որ Նախագահին հաւանութիւնը չըլլայ, ընկերութենէն դուրս ելող մարդ չի կրնար ընթերցարանը երթալ. նաև ժողովին անգամ չըլլող ընկերներէն ալ մէկը թէ որ ժողովի մը ներկայ գտնուիլ ուղէ, նախագահէն հրաման առնելու է, և բնաւ ժողովին գործերուն միջամուխ չի պիտի ըլլայ :

Հ Ա Տ ՈՒ Ա Ճ . Թ .

[Ընդհանուր մոցոյականաց դարտականութիւնց .

42. Ամեն ժողովական որոշեալ օրին ու ժամուն ^մանպատճառ ժողովարանը պիտի գտնուի. թէ որ բանաւոր պատճառ մը ունենայ չի գալու, ժամ մը առաջ նամակով մը Նախագահին պիտի իմացընէ :

43. Պաշտօնատար ժողովականները թէ որ բանաւոր պատճառ մը ունենան չի գալու, ժամանակ առաջ նամակով կամ որ և է կերպիւ պիտի իմացընեն իրենց փոխանորդներուն կամ օգնականներուն, որ գոնէ անոնք գտնուելով ժողովին գործողութիւնը չի խափանուի :

44. Ժողովականաց գլխաւոր պարտականութիւնը համարուած է, եղած որոշմունքներուն վրայօք ընկերութենէ դուրս ելող անձանց հետ չը խօսակցիլ, և թէպէտ ժողովը բնաւ երբէք գաղտնի գործ մը չի պիտի ունենայ, բայց և այն

պէս ժողովոց մէջ եղած որոշմունքը ժողովարանէն դուրս հանելը քաղաքավարութեան դէմ գործ մը կը համարուի :

Հ Ա Տ Ո Ւ Ա Ց . Ժ .

Պաշտօնատար ժողովականաց դաշտօնը եւ դարասկստութիւնը .

Ա . Նախագահին պաշտօնը :

45 . Նախագահը բոլոր ընկերութեան կողմէն ընտրուած գլուխ մը կամ երեսփոխան մըն է ընկերութիւնը իր նպատակին հասցընելու և անոր շահուցը վրայ հսկելու :

Ուստի իշխանութիւն ունի ,

Ա . կանոնադրութեանս բոլոր կարգադրութիւնները յարգել ու կատարել տալու :

Բ . Իրեն օգնական տրուած ժողովականներուն յատկացեալ բոլոր գործոց կատարումը իրենցմէ պահանջելու :

Գ . Ժողովը բարեկարգութեան մէջ պահել և ժողովականաց ու ընկերներուն պատուոյն դպչելիք որ և է գործք մը կամ խօսք մը ընել չիտալու :

Դ . Ընկերութեան նպատակին և օգտին վնաս բերելիք անձերն ու գործքերը ժամ մը առաջ հեռացընելու :

Ե . Ժողովականաց փոխանորդութիւնը ՚ի դիմաց ժողովոյն պէտք եղած գրութիւնները ստորագրելու և կնքելու :

46 . Ինչ որ վերայիշեալ իշխանութեանը գործադրութեանը կամ պարտականութեանցը կ'օգնէ , իր իրաւունքն է ընկերներէն պահանջելու :

Բ. Արեւիկայի պաշտօնը և պարպախանութիւնները :

47. Արեւիկայի պաշտօնն է ,

Ա. Ժողովոց գործառնութիւնները օրովը արձանագրել և ժողովին վերաբերեալ ուրիշ գրութիւնները ընել :

Բ. Այնտեղ ամիս ժողովոց մէջ կատարուած գործոցը համառօտ մէկ բովանդակութիւնը ընել, և յետագայ ամսոյն առաջին ժողովոյն կարգալով՝ Նախագահին ստորագրել տալ :

Գ. Վանձապետի պաշտօնը և պարպախանութիւնները :

48. Վանձապետի պաշտօնն է ,

Ա. Բնկերներուն ամսական տուրքը ընդունիլ :

Բ. Սնտուկը մտած ու ելած գրամին հաշիւը բռնել :

Գ. Վեց ամիսը անգամ մը բնկերութեան ծախուցը հաշուեցուցակը շինել :

Այսու ամենայնիւ թէ որ վեց ամիս չեղած բնկերութեան ելումից շարժմանը մէջ գիտողութեան արժանի բան մը ըլլայ, կանխաւ ժողովին պիտի իմացընէ որ պէտք եղած միջոցները հոգայ :

49. Վանձապետը նաեւ պարտաւորեալ է բնկերութեան եկամտից հաշիւը տալու որ ժամանակ որ ժողովը իրմէն պահանջէ :

Վանձապետը սեղանաւորին տուած գրամները հաստատելու համար ձեռքը մշանջենաւոր անգորբագիր մը (սերկի) պիտի ունենայ , որուն մէջ սեղանաւորը առած գումարը օրովը պիտի նշանակէ իր ձեռագրովը և այս անգորբագիրը

Առաջարկութեանց վերաբերեալ կանոններ .

59. Ըմեն ժողովական իրաւունք ունի առաջարկութիւն ընելու , և անոր վրայօք իր խորհուրդը ազատ յայտնելու :

60. Ժողովին գումարմանը գոնէ օր մը մնացած ժողովականք ընելիք առաջարկութիւննին գրով մը ատենագրին պիտի ծանուցանեն , որ ան ալ զանոնք առաջարկութեանց արձանագրուէ մէջ կարգաւ անցընէ ու ժողովին ներկայացընէ :

61. Քննութեան սկսելէն առաջ ատենագրւ պիրը առաջարկուած խնդիրները (թէ որ մէկէն աւելի են նէ) ժողովին պիտի կարգայ . յետոյ ժողովին մեծագոյն մասը սր կարգաւ արժան դատէ , նոյն կարգաւ անոնց վրայ պիտի խորհուի :

62. Առաջարկութեան մը վրայ մինչեւ որ կատարեալ որոշում մը չըլլայ , ուրիշ մը չի պիտի անցնուի :

Խորհրդակցութեան ժամանակ ժողովականաց մէկը չի կրնար առաջիկայ խնդիրէն ուրիշ նիւթի մը վրայ խօսք բանալ , որչափ որ իրեն հարկաւոր բան թուի :

63. Ժողովական չեղող ընկերներէն մէկը թէ որ ժողովոյն առաջարկութիւն մը ընել ուզէ , պէտք է որ գրով ատենագրին կամ անոր օգնականին հաղորդէ այն առաջարկութիւնը , և ան ալ առաջարկութեանց արձանագրութեանը մէջ անցունելով ժողովոյն ներկայացնէ 61 օդուաւ ծին համեմատ :

Հ Ա Տ ՈՒ Ա Ճ Ժ Գ .

Քուեարկութեանց վերաբերեալ կանոններ .

64. Ժողովին որոշու մները ծածուկ կամ յայտնի քուեարկութեամբ պիտի ըլլան ըստ հարկին . յայտնի քուեարկութի կամ ձեռք վեր վերցընելով կ'ըլլայ կամ գրով . իսկ ծածուկ քուեարկութիը պիտի ըլլայ երկու վրան գոց տուփերու մէջ մէկ մէկ ձերմակ ոսպնածեւ ոսկրներ ձգելով, ուրոնց մէկուն վրայ սեւ նիշ մը պիտի ըլլայ, ստորասու թեան նշան . իսկ միւսը առանց նիշի բացասութեան նշան :

65. Հասարակ բաներու համար մինչեւ որ ներկայ ժողովականաց մեծագոյն մասը քուե չի տայ, որոշումը վաւերական չի համարուիր . իսկ գլխաւոր բաներու համար ժողովականաց իսկական թուոյն գոնէ $\frac{3}{4}$ մասին հաւանութիւնը պէտք է առնուի :

66. Նախագահը ինք քուե չունի, բայց որ ժամանակ ներկայ ժողովականաց քուէն բաւական չըլլայ թուով կամ հաւասար ըլլայ, այն ժամանակը կրնայ այն պակասը լեցնելու կամ հաւասարութիւնը աւրելու համար ինքն ալ քուե տալ :

67. Ժողովը մը մէջ որոշում մը ըլլալէն ետեւ թէ որ անոր մէկ անպատեհութիւնը կամ փորձով տեսնուի, կամ քիչ մը ետքը խելամոռելու ըլլայ, ժողովը կրնայ այն որոշումը փոխել ըստ մասնեայ կամ բոլորովին՝ ուրիշ անգամի մը :

Հ Ա Տ ՈՒ Ա Ճ Ժ Դ .

Ընկերութեան անգամներուն հրաժարուիցջ ու մերձուիցջ

68. Սէկը չի կրնար զինքը ընկերութենէն հրաժարուած համարիլ, թէ որ իր դիտաւորու

Թիւնը առաջուց ժողովին չիմացընէ , և անոր հա-
ճուլթիւնը չի ստանայ :

69. Բնիկեր մը իր հրաժարուած ժամանակը
չի պիտի կրնայ ընկերութեան ըրած որ և իցէ
պարգեւը ետ առնելու թէ որ առաջուց այն-
պէս պայման ըրած չըլլայ : Այս տեսակ պայ-
մանները պէտք է , որ ամեն նոր ժողով իր ըս-
տորագրութեամբը վաւերացընէ : Իսկ բաժա-
նորդութեան գինը բնաւ չի պիտի կրնայ ետ առ-
նուիլ :

70. Ախտագահը իշխանութիւն ունի տնօ-
րինական ժողովին գիտութեամբը ընկերութե-
նէն բոլորովին մերժելու այն անձերը , որոնք ըն-
կերութեան պատուոյն և շահուն վնաս բերելիք
յանցանքի մէջ կը գտնուին :

71. Բնկերութիւնը (Աստուած մի արասցէ)
թէ որ դադարելու ըլլայ , ընդհանուր ժողով մը
պիտի ըլլուի , որոշելու համար թէ ինչ պիտի ը-
նեն ընկերութեան գոյքը :

Հ Ա Տ Ո Ւ Ա Ճ Ժ Ե .

Արձանագրութեանց և բնկերութեան վերաբերեալ
գրութիւններուն վրայ .

72. Ժողովը ընդհանուր արձանագրութիւն
մը պիտի ունենայ , որուն մէջ կարգաւ պիտի
գրուին ընկեր ըլլողներուն անունը , մականունը ,
արհեստը , բնակուիլը , տարիքը , ընկերագրութե-
թուականովը հանդերձ . և երբոր մէկը ընկե-
րութենէն հրաժարուի , նոյն տոմարին ծանօթու-
թեանց գաւազանին մէջ պիտի յիշատակուի
պատճառը և թուականը :



73. Բնկերութեան գլխաւոր նամակներուն և սր և իցէ գրութեանց օրինակը մասնաւոր սօմարի մէջ պիտի օրինակուին :

74 . Բնկերութեան հաշուեգիրքերը կրկնատու մարի գրութեամբ պիտի բռնուին :

75. Բնկերներուն մէջէն ո՛վ ուզէ՝ կրնայ ժողովոյն հաշուետու մարները քննել մինչեւ տասն և հինգ օր զկնի հաշուեցուցակը իրենց ներկայանալէն :

76 . Թանգարանին անուանը եկած նամակները և գրութիւնները Նախագահն ու ատենադպիրը միայն պիտի բանան :

77 . Բնկերութեան վերաբերեալ նամակները և գրութիւնները ժողովարանին մէջ պիտի մնան , և մասնաւորապէս ատենադպրին սփռուանութեանը տակը :

Հ Ա Տ Ո Ւ Ա Ճ . Ժ . Զ .

Ձանազան կանոններ .

78. Բնկերութիւնը այս կանոնները վեց ամիս գործածելէն ետեւ թէ սր մէջը պակաս մը կամ փոփոխելիք բան մը տեսնայ , խնամով պիտի նշանակէ , ու վեց ամիսէն ետեւ իր դիտած թերութիւնները և կամ փոփոխութիւնները գրի առնելով այս կանոնագրութեանս մէջ պիտի մշտուցունէ :

79 . Այս կանոնագրութիւնը առաջին անգամ սրբագրուելէն ետեւ (տես յօդ . 78) կրկին վեց ամիս պիտի գործածուի , և թէ որ այնքան ժամանակին մէջ գործադրելի կամ կատարեալ համարուի , այնուհետեւ միշտ անփոփոխ կամ


անայլայլելի պիտի մնայ :


80 . Ժողովը այս հիմնական կանոնադրուէ գործադրուէն համար հարկ համարուած կարգադրութիւնները պիտի ընէ , և ասոնք միշտ կրնան փոփոխիլ ըստ հարկի :


81 . Ժողովը իր բարեկարգութեանը համար մասնաւոր կանոնադրութիւն մ'ալ պիտի ունենայ , որն որ ժողովարանին մէջ կախուած ըլլալով , ժողովականաց նիստ ունեցած ժամանակը կամ ժողովչեղած ժամանակը ընթերցման համար եկած ընկերներուն վարմունքը ուղղէ և ցուցընէ :

82 . Այս ընկերութեան բոլոր պաշտօնատարներուն պաշտօնը ձրի պիտի ըլլայ , այսու ամենայնիւ թէ որ անոնցմէ անանկ մէկը գտնուի , որ ընկերութեան օգնութեանը կարօտի , և միանգամայն յայտնի օգուտներ ըրած ըլլայ ընկերութեան , այն ժամանակը ընկերութիւնը յարմար պիտի դատէ որ և է կերպիւ հաւրաւոր վարձատրութիւն մը ընելու :









0021969

2013

5448

« Ազգային գրադարան



NL0021969

